

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՂԻ «աղիք»

Գրաբարում վկայված է V դարից: Արմատական բառարանում այն չստուգաբանված բառերի շարքում է¹: Գ. Ջազուկյանը նշում է հայ. աղի-ք և ուզրո-ֆիննական լեզուներում *suoli*, *solo* «ազիք» ղուգահեռները՝ **soliŋa* > աղիք անցմամբ²: Պրոֆ. Ա. Մարդարյանը աղի(ք)-ը կապում է աղալ-ի հետ³:

Մեր կարծիքով՝ աղի-ք բառի մեջ առկայանում է «կեղտ» իմաստը՝ հ. – ե. **sal-*ից, որը հայերենում օրինաչափորեն սլիաի ներկայանա աղ – ձևով (ուռենք աղտ, աղծ զուգահեռները): Ուրեմն՝ աղի-ք բառացի նշանակում է «կեղտ պարունակող, կեղտաման»: Փորձենք հիմնավորել այս կարծիքը. նախ՝ մարմնի մասերի հնդեվրոպական որոշ անվանումներ ունեն «մի բան պարունակող» իմաստը. հմմտ. **k[h](e)r Hs-r/-n* «գլուխ, մտքի և ուղեղի պահեստարան»⁴: Երկրորդ՝ դասական մատենագրության մեջ երբեմն փոր, փորոտիք հասկացությունները փոխարինվում են աղբ բաղադրիչով կազմված բառերով. օրինակ՝ «... և զաղբաբոյն որովայնն փտեալ ապականիցէ»⁵: «... զի յորժամ սիրտն հանճարական հպարտանայցէ, սաստեսցէ ի նա փորն աղբաման»⁶: «... ծառայ ե ստրուկ որովայնի արդարեւ լինելով զազբիւս մեծացուցանէր»⁷:

Եթե աղ-ի(ք), իրոք կարելի է կապել հ. – ե. **sal*-«կեղտ»-ի հետ, ապա նույն արմատի հետ կարելի է առնչել նաև աղբ բառը՝ բ-ն համարելով ածական:

1 Տե՛ս Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ Արմ.). հ. 1, Երևան, 1971, աղի բառահոգովածը: Մ. Հանեյանը իր «Մարմնի մասերի հնդեվրոպական անվանումների տարածքային նկարագիրը հայերենում» աշխատության մեջ աղի-ք-ը նույնպես հ. – ե. չի համարում (տես Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր. Երևան, 1979):

2 Գ. Ջ ա չ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 296:

3 Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1985, № 3, էջ 92:

4 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, с. 813.

5 Տեառն Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք. Վենետիկ, 1860, էջ 127:

6 Եւսեբիայ Եպիսկոպոսի Եմեսացույ ճառք («Հանդես ամսօրյա», 1959, ճառ ԺԸ, էջ 174): Ի դեպ, աղբաման բառը գրաբարի բառարաններում վկայված չէ:

7 Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 137: Այս հատվածը Ստ. Մալխասյանը թարգմանել է «միայն իր փորի ծառան և ստրուկը դառնալով աղբանոցներն (ընդդժուժմը մերն է – Լ. Հ.) է մեծացնում»: Ընդդժվածը փոխաբերացված է, և ավելի ճիշտ թարգմանությունը կլիներ «որովայնն էր մեծացնում» կամ, թերեւս, ծանոթաբարձր, որ աղբիւս նշանակում է նաեւ «փոր», «որովայն»:

ԱՌԱՔԻՆԻ

Վկայված է V դարից. նախնական իմաստն է «կտրիճ, քաջ», իմաստային զարգացումով՝ «բարեպաշտ, հոգով մաքուր»: Արմ.-ում բառը ստուգաբանված է: Ըստ էություն Աճառյանը մերժում է բառի ստուգաբանությունը՝ վերաբերյալ գոյություն ունեցող նկատառումները և բառի արմատը համարում է առաքէն-ը⁸: Հետագայում «Հայկականք» ընդհանուր խորագրով հրատարակված հոդվածներից մեկում Ի-ն համարում է ածականակերտ ձևույթ, -առա-ն նախդիր, իսկ արմատական մասը՝ քին⁹:

Է. Աղայանը քէն-ը բխցնում է հ. - ե. *get-(ket-) «կտրիվ» արմատից, որից գալլ. *cattu* «կտրիվ», իռլ. *cath* «կտրիվ» և այլն¹⁰: Վերոհիշյալ ստուգաբանությունը ինչ-որ չափով առարկելի է նախ՝ հ. - ե. *get(ket) հայ. քէն համապատասխանություն, այնպես էլ -առա- ածանցի տեսակետից¹¹: Գ. Զահուկյանը առաքինի բառի արմատը առնչում է հ. - ե. *ken «ջանալ, աշխատել»-ի հետ՝? Նշանով բերելով մ. կիմր. *gochawn*, *gogawn* «դերազանց?» գուգահեռ¹²:

Առաքինի բառի արմատը կարելի է համարել աք «ոտք»-ը, իսկ առ-ը և Ինի(էն+ի) ածանցներ: Հիշյալ արմատն է նաև առաքել «ուղարկել» բառում, իսկ Զեյթունի բարբառում, ինչպես նշում է Հ. Աճառյանը, կա և աքել «ուղարկել» (առանց -առ- ձևույթի)¹³:

Եթե ոտքի հետ աղերսվում է ուղարկելը, ապա իմաստային տեսակետից առարկելի է և կտրիճ, քաջը, իսկ Նոր Հայկագյան բառարանը (այսուհետև՝ ՆՀԲ) նշում է «քաջ, գորաւոր, ճարտար բանիբուն» և նման մի շարք իմաստներ¹⁴: Գրաբարում, ինչպես նաև շատ լեզուներում, մարմնի մաս ցույց տվող բառերով հաճախ արտահայտվում են «ուժ, գորություն» իմաստները. Հմմտ. սրտեայ «քաջ, արի», բունաւոր «ուժգին» և այլն: ՆՀԲ-ի վկայած օրինակներից մեկում կարելի է տեսնել ոտն արմատով «քաջ» իմաստը. «Ահա ոտքն, որ թաղեցին զայրն քո ի դրանն. հանցեն և զքեզ»¹⁵:

ԱԻԱԶԱԿ

Ըստ ՆՀԲ-ի մեկնություն «Իբրեւ հէն աւագուտ վայրաց, կամ ի վերայ վազող». յելուղակ, յայտնի գող, հուղկահար, կողոպտիչ և սպանող ուղեորաց»: Արմ.-ում բառը ստուգաբանված է: Ելնելով ՆՀԲ-ի մեկնությունը

8 Տե՛ս Արմ. առաքինի բառահոդվածը:

9 Տե՛ս Արմ., հ. 4, Երևան, 1979, էջ 658-659:

10 Է. Աղայան. Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ. Երևան, 1974, էջ 27-28:

11 *get- քէն անհամապատասխանությունը նկատելով՝ է. Աղայանը գրում է. «Հայերենի համար պետք է կանխադրել հնիս. արմատի ո ձևորդով ածած *geton տարրերակը (*geton - հայ.-*քեյն-քէն» (նույն տեղում):

12 Գ. Զահուկյան. նշվ. աշխ., էջ 244:

13 Տե՛ս Արմ. առաքել բառահոդվածը:

14 Տե՛ս ՆՀԲ առաքինի բառահոդվածը:

15 Տե՛ս ՆՀԲ ոտն բառահոդվածը:

յունից՝ կարելի է նշել, որ բառարանագիրները մի դեպքում նկատի են ունեցել ավազ «Հող», մյուս դեպքում՝ վազ(վազելի արմատը):

Բառի արտաքին-հնչյունական տեսքը հուշում է, որ այն կարող է լինել իրանական փոխառություն: Գ. Զահուկյանն էլ ընդունում է ըրանի-իրանական ծագումը, թեև կասկածելի է համարում Զ. Անդրոնիկաչվիլու կողմից առաջարկվող ստուգաբանությունը (a-vaz-ak՝ vaz «գնալ, ճանապարհորդել»)¹⁶: Գ. Զահուկյանը, սակայն, առաջակ բառը չի ներառել իրանական փոխառությունների ցանկում՝ անշուշտ նկատի առնելով բառի ոչ հավաստի ստուգաբանությունը¹⁷:

Մեր մի աշխատության մեջ առաջակ-ը համարել ենք իրանական փոխառություն՝ ելնելով բառի հնչյունական կազմից, ինչպես նաև Զ. Անդրոնիկաչվիլու կողմից բերվող զուգահեռներից՝ առանց բառաքննական նոր տվյալների¹⁸:

Ստորև առաջարկում ենք նոր փաստարկ. բառի առաջին բաղադրիչը կարելի է համարել իրան. /ā/vāz «ձայն, հնչյուն, գոչյուն» բառը, -ակ-ն էլ նույնպես կարող է լինել իրան. ak, որն ունի բաղմաթիվ իմաստներ, այդ թվում նաև «մի բան անող, կատարող, ինչպես հայ. ենթակայական դերբայի ող/իչ ձևույթը: Ուրեմն՝ առաջակ նախապես կարող է նշանակած լինել «գոռացող, սպառնալի, բիրտ ձայն հանող»: Ավելորդ է ենք համարում նշելու, որ իր. ZAV/ZOV, ZU «ձայն, գոչյուն» արմատից Երեմիա Մեղրեցու Բառարանում վկայված է գուզ «առաջակ» բառը¹⁹:

ԲՈՍՈՐ

Բառի գունանվանական իմաստը՝ «կարմիր», «դեղնավուն» վաղ գրաբարում ավանդված է: Աճառյանը չի ընդունում Պետերսոնի ստուգաբանությունը՝ հ. - ե. բոց և -որ ածանց²⁰: Ակադ. Գ. Զահուկյանը, ըստ էության, ընդունում է այդ ստուգաբանությունը²¹:

Բառի հ. - ե. բնույթը կասկածելի ենք համարում այն պատճառով, որ բոսոր-ի «կարմիր, դեղնավուն» իմաստը վաղ գրաբարում ավանդված է, և այդ իմաստը չի պահպանել հայերենի և ոչ մի բարբառ, որը կողմնակի ապացույց է, որ այդ բառիմաստը հայերենի բառապաշար է մտել գրական ճանապարհով, տարածում չգտնելով խոսակցական լեզվում: Աճառյանը գտնում է, որ բոսոր-ը եբր. bāsōrā բառն է, «որ նշանակում է «բուն ամրապատ և անմատչելի տեղ» և հետո դարձել է եզոմայեցոց դիսալոբ քաղաքի անունը»²²: Այս մեկնաբանությամբ թեև մատնանշվում է բոսոր

16 Գ. Զահուկյան. նշվ. աշխ., էջ 556:

17 Նույն տեղում:

18 Լ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները. Երևան, 1990, էջ 234, 264:

19 Բառգիրք Հայոց. քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի. Երևան, 1975, էջ 105:

20 Տե՛ս Արմ. բոսոր բառահոգվածը:

21 Գ. Զահուկյան. նշվ. աշխ., էջ 218, 269:

22 Տե՛ս Արմ. բոսոր բառահոգվածը:

գունանվան առաջացումը, սակայն իմաստային հենքը չի ուրվագծվում: Այսինքն «արմատ, անմատչելի տեղ» → «կարմիր, դեղնավուն» անցումը չի պարզաբանվում:

Սուրբ գրքի բառարանում բոսորը մեկնվում է 1. «գետակ որ կը թափի Միջերկրական ծովը Գազա քաղաքէն հինգ մղոն գեպի հարավ. 2. Բոսոր կը կոչուէր նաեւ ապաստանի քաղաք մը Ռուբենի երկրին մէջ յայնկոյս Յորդանանու»²³:

Հասկանալի է, որ վերոհիշյալ տվյալները ոչնչով չեն կարող լուսաբանել բոսոր գունանվան դործածությունը:

V դարի մատենագրության մեջ բոսորը վկայված է միայն Աստվածաշնչում (ոչ որպես գունանուն, այլ տեղանուն) 11 անգամ: Այդ վկայություններից մի քանիսն էլ չեն կարող օգնել Բոսոր (տեղանուն)–բոսոր (գունանուն) անցման հիմնավորմանը. օրինակներ «... զի զոհ տեառն է ի Բոսոր» (Եսայ. 1. 7. 6): «Եւ թաղաւորեաց ընդ նորա Յովրաբ որդի Զարեհի ի Բոսորայ» (Մննգ. 12. 33): Ի տարբերություն վերոհիշյալ օրինակների, Սուրբ գրքի մի շարք վկայություններ աղերսվում են «անապատ»-ի հետ. Հմմտ. «Զբոսոր անապատին, ի դաշտին երկրի ի ցեղէն Ռուբենի» (Յեսու. Ի. 8, նաև ԻԱ. 36): «Ի ցեղէն Ռուբենի, զբոսոր յանապատին և զգատուցեալն նորա» (Ա. Մն. 2. 78): Անապատի դեղնակարմրագուլն գուլնն էլ երևի տեղանուն-գունանուն իմաստափոխությունը նպաստող գործոնն է եղել. ուրեմն գործ ունենք Բոսոր տեղանուն–բոսոր գունանուն ոչ անմիջական, այլ միջնորդավորված անցման հետ: Ի դեպ, Ս. գրքի մեկ այլ օրինակում բոսորը առնչվում է «կարմրություն» հետ. «Կարմրություն ձորձոց իւրոց ի բոսորայ» (Եսայ. 49. 1): Ավելացնենք, որ հատուկ անուն→հասարակ անուն փոխանցումները (որևէ հատկանշի հիման վրա) առկայանում են շատ լեզուներում, այդ թվում և հայերենում. Հմմտ. ախորան «սըրն-թաց», որը ծագել է Ախուրեան դետանունից²⁴:

ԵՐԿԱԹ

Մետաղի անվանում նշանակող այս բառի ծագումը, այսինքն նրա հնդեվրոպական կամ որևէ կոնկրետ լեզվից փոխառյալ լինելը, պարզված չէ: Արմատի ծագումը պարզելու դժվարությունը պայմանավորված է նաև հ.– ե. և ոչ հ.– ե. (ուգրո-ֆիննական, կովկասյան, քարթվելական) լեզուներում նկատված զուգահեռների առկայությամբ²⁵:

«Հնդեվրոպերենում «երկաթի» համար մի ընդհանուր բառ չի վերականգնվում, առանձին իրարից չբխող բառեր ծագում են միայն որոշ հ.– ե. պատմական բարբառներում, որը ցույց է տալիս, թե երկաթը ի հայտ

23 Բառարան Սուրբ գրոց. Կոստանդնուպոլիս, 1881, էջ 98:

24 Տե՛ս Արմ. ախորան բառահոգվածը:

25 Տե՛ս Արմ. երկաթ բառահոգվածը: Գ. Զ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 265, 295, 436, 598: Ուգրո-ֆիննական զուգահեռներից նշենք kúrno, kórt, քարթվելականից՝ (r)кiна, erkina:

է եկել Հ.— ե. նախալեզվի առանձին բարբառային խմբերի բաժանվելուց հետո»²⁶:

Նախքան մեզ հետաքրքրող բառի ծագման քննությանն անցնելը նշենք, որ մետաղների անվանումների մեջ նկատվում են որոշ օրինաչափություններ. ինչպես մետաղների նախնական անվանումների և դունանունների կապը, նաև միևնույն անվանումը տարբեր մետաղներին փոխանցվելու հնարավորությունը²⁷:

Երկաթ բառի բնույթը պարզելու համար, թվում է, կարող է օգնել մեկ այլ մետաղի անվանում արծաթը²⁸: Նախ այս երկու բառերում նկատելի է -աթ- ձևույթի առկայությունը, որը հուշում է, որ անկախ երկաթ-ի արմատի բնույթից, բառն ամբողջությամբ հայակազմություն է: -Աթ-ը կամ ավելի ճիշտ — թ-ն ծագում է Հ.— ե. *tō-ից, որը հայերենում կարող է ներկայանալ — թ-ով արծաթ, երկաթ, դ-ով հիւանդ, մարդ, -յ-ով բայ «որջ» և այլն²⁹: Ինչ վերաբերում է արծաթ-ին, ապա այն Հ.— ե. ծագումով բնիկ հայերեն բառ է *arg'ato[-nto]³⁰: Համապատասխան արմատը առնչվում է «սպիտակ գույնի, փայլելու» հետ:

Արծաթի և երկաթի արծ և երկ ձևույթները համարում ենք նույն արմատի տարբերակային ձևեր՝ նկատի առնելով ծ-ով և կ-ով տարբերակների դոյությունը. Հմմտ. ծոել-կոել, զրկել-զերծել, ծամածուռ-կամակոր, ծոռն «թոռան որդին» և բարբառային կոռն «թոռան թոռը»:

Հայտնի է, որ հայերենում — ը-ից առաջ հանդես է դալիս -ա- կամ -ե- նախահավելվածը. Հմմտ. արագ-երագ, երագ, երակ, երամ և այլն: Նախահավելվածները բնորոշ են հատկապես իրանական փոխառություններին, բայց դրանք առկայանում են նաև Հ.— ե. ծագում ունեցող բնիկ հայերեն բառերում. *reg'os -երեկոյ, *rk'tios -արջ, reu -արեւ և այլն: Հայտնի է նաև, որ նախահավելվածները հայերենի բարբառների մի խմբում ներկայանում են -ա-ով, մեկ այլ խմբում —ե-ով. բացահայտված են նաև այդ դրսևորումների պատճառները³¹:

Արծաթ-երկաթ զույգում -ա-ն և -ե-ն նախահավելված անվերապահորեն չենք կարող դիտել, քանի որ ըստ ընդունված ստուգաբանության արծաթ բառի Հ.— ե. արմատում a-ն առկայանում է³²:

Անկախ արծաթի -ա-ի բնույթից, այն ընկալվել է որպես նախահավելված և առկայացել երկաթ բառում —ե-ով³³:

26 Т. Гамкрелидзе, Вяч. Иванов. *նշվ. աշխ.*, էջ 710:

27 Նույն տեղում, էջ 710–712: Նաև՝ Вяч. Иванов. Проблемы истории металлов на древнем востоке в свете данных лингвистики. — «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 69–86:

28 Երկաթ և արծաթ բառերի կապը տեսնում է և Հ. Այվազյանը (Հայերեն մետաղանունների ծագումնաբանական հարցի շուրջ. — «Բանբեր Երևանի Համալսարանի», 1998, № 3, էջ 189): Հ. Այվազյանի լեզվական հիմնավորումները, սակայն, բավարար չեն:

29 Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. *նշվ. աշխ.*, էջ 237:

30 Տե՛ս Արմ. արծաթ բառահոգվածը: Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. *նշվ. աշխ.*, էջ 113:

31 Տե՛ս է. Ա դ ա յ ա ն. Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում. — ՀՄՄԻ ԳԱ «Տեղեկագիր» Հաս. գիտ., 1953, № 5, էջ 67–80:

32 Եթե արծաթ, արծնել բառերի համար ընդունելի լինի *rg-i-n, ապա -ա-ն կարելի կլինի դիտել որպես նախահավելված:

33 Երկաթ-ի բարբառային արկաթ ձևի ավելի հին լինելը գայթակղիչ է, բայց փաստարկման կարիք ունի:

Քանի որ արծաթ մետաղի դործածությունը ավելի վաղ է եղել, քան երկաթինը, ապա նաև այդ տեսանկյունից արծաթ/երկաթ մեր կողմից նույնարժատ գիտվող բառերից նախնականը եղել է արծաթը, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանում համապատասխան օրինաչափ հնչյունական փոփոխություններով սկսել է գործածել երկաթ բառը: Բացառելի չէ, որ սկզբնապես արծաթ *ե. երկաթ* նույն մետաղի (արծաթի) անվանումներն են եղել³⁴ և հետագայում են դրանց իմաստները տարբերակվել³⁵:

ԸՆԴԵՐՃԱԿԱՆ

Բառը գրաբարի բառարաններում վկայված չէ: Այն մեղ հանդիպել է Եվսեբիոս Եմեսացու ճառերում. «Ձայս ասեմք առ ի խափանումն հեթանոսական խտրանացն. զի մի իբրեւ ընդերձական դուռն արկանիցէ ի ներքս թշնամին զհեթանոսութիւն և ի փոքր կայծէ հրդեհս տարածանիցէ»³⁶: Բառը կազմված է ընդ+երիճ+ական ձևույթներից: Երիճը որպես գլխաբառ բառարանները չեն վկայում: ՆշՐ-ն ունի երիճացեալ, որը մեկնում է «իբր երիթացեալ»: Վերջինս էլ մեկնվում է «ծիրեալ. հալեալ մաշեալ. վտտեալ և աղտեղեալ սեւացեալ»³⁷:

Ուրեմն ընդերձական դուռ կարելի է մեկնել «փտած, խարխուլ գուռ»:

ՊԱՏԳԱՐՀԵԼ

Բառը հայկազյան բառարաններում վկայված չէ. առաջին և թերևս միակ վկայությունը գտնում ենք «Նորագյուտ Մնացորդաց...» գրքում³⁸. «Եւ ոչ կարաց պատգարհել Յերոբովամ, զի զամենայն աւուրս կենաց իւրոց Արիա զկնի էր և հալածէր զնա» (Բ. Ժ. Գ. 20): Ասավածաշնչի այլ հրատարակություններում պատգարհել-ի փոխարեն զօրութիւն է: «Եւ ոչ եւս գոյր զօրութիւն Յերոբովամայ». այգպես է և աշխարհաբար թարգմանություններ. «Յերոբովամն այլևս չկարողացավ զօրութեամբ ոտքի կանգնել»³⁹: Արմ.-ում Աճառյանը պատգարհել-ը մեկնում է «ուժ գտնել, դորանալ, գորություն ունենալ» առանց ստուգաբանելու և իրավացիորեն մերժելով բառի այլոց կողմից մեկնության փորձերը («պատգարակից» իբրև «հանգստանալ», *patkar* «պայքար»-ից, իբրև «պայքարելու ուժ զգալ» և այլն)⁴⁰:

34 Հ.-ե. *Hare/OS-ով մի շարք լեզուներում անվանվում են «պղինձ», «բրոնզ», նաև «երկաթ» մետաղները: Ենթադրվում է, որ նախապես անվանվել է «պղինձը», հետագայում այդ անվանումը փոխանցվել է «բրոնզին», ավելի ուշ՝ «երկաթին» (Տե՛ս T. Γ α μ κ ρ ε λ ι Δ ζ ε, Β ρ α χ. Ψ α ν ο β. Նշվ. աշխ., էջ 709):

35 Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ երկաթ բառը գործածվել է վաղնջահայերենում (տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 265):

36 «Հանդես ամսօրյա», 1959, էջ 355:

37 Տե՛ս ՆշՐ երիթացեալ բառահոգովածը:

38 Գիրք Մնացորդաց րատ հնագոյն հայ թարգմանություններ. Մոսկուա, 1899:

39 Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր կտակարանների. արևելահայերէն նոր թարգմանութիւն. Մայր աթոռ Ս. էջմիածին, 1994:

40 Տե՛ս Արմ. պատգարհել բառահոգովածը:

Մեր կարծիքով ըստ իրանական փոխառությունն է՝ եզակի գործածություն (ոչ հաճախական բառերի առկայությունը իրանական փոխառյալ բառաչերտում նկատված երևույթ է):

Բառակազմական ի՞նչ ձևույթներ են հիշյալ բառում. բնականաբար, -ել-ը հայերենի բայակազմական ձևույթն է, որով թարգմանիչը նոր բայ է կերտել: Առանձին ձևույթ է և -պատ-ը, որը հանգես է դալիս հայերենի բազմաթիվ իրանական փոխառություններում. պատուհաս, պատկեր, պատասխանի, պատուանգան... պատ-ը իրան. *pati/pat* մասնիկն է: Առանձնացնում ենք նաև -գար- ձևույթը, որը, ամենայն հավանականությամբ, իբան. *kaθi, kar* «ուժ, գորություն» արմատն է, որը առկայանում է որոշ իրանական փոխառություններում. կարել «կարողանալ», անկար «անկարող», կարութիւն «գորություն», ապիկար և այլն: Առարկելի կարող է թվալ *kar* (կար) – գար նույնիմաստ ձևույթներում կ>գ անցումը, սակայն դարձյալ հայերենի իրանական փոխառությունների նյութի վրա (նաև իրանական լեզուներում)⁴¹ կարելի է արձանագրել *k-g* (կ-գ) անցումը: Իրան. *kausa* «կողմ» – հայ. կոյս «կողմ», կուսակալ, նաև պատգոսապան (վերջինս տիտղոս է՝ «կուսակալ, կողմնապահ»)⁴²: Մնում է պատգարհելի – հ-ն: Կարելի է ենթադրել *պատգարել-պատգարհել վերջին վկայված ձևը համարելով բարբառային արտասանություն արգյունք, սակայն դա այնքան էլ հիմնավոր չէ, և դժվար է փաստարկել: Ամենայն հավանականությամբ -հ-ի գեպընձ առկա է իրան. *ih*-բառակազմական ձևույթը, որ վերացական գոյականներ է կերտում ածականներից, թվականներից, բայերից⁴³:

Ուրեմն եղել է *պատգարհել > պատգարհել⁴⁴: Տեղին է հիշել արևելագետ Հ. Թիրյաքյանի այն նուրբ նկատառումը, թե «Նորագյուտ Մնացորդաց» գրքում իրանական փոխառությունները շատ են, քան «Յոթանասնից» մեջ⁴⁵:

ՍԿՍ/ԱՆ/ԻԼ

V դարից վկայված այս բառը ունի նաև սկսանալ, սկսնուլ ձևերը, իսկ արգի գրական արևելահայերենում՝ սկսել: Արմ.-ում բառը ստուգաբանված չէ: Աճառյանը ենթադրում է, որ «բուն արմատն է *սկիս, ինչպես ցույց է տալիս սկիբբն (սեռ. սկիբբան, գործ. սկիբամբ)⁴⁶: Գ. Զահուկյանը,

41 Տե՛ս Основы иранского языкознания. Среднеперсидские языки. М., 1981, с. 32–33.

42 Իրանական Հնչյունափոխ նույնարմատ ձևերի մասին տե՛ս Լ. Հ ո վ հ ա ն - ն ի ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 136–139:

43 Տե՛ս Основы..., с. 66–67. Միջին իրանական լեզուների բառարաններում բազմաթիվ բառեր կան – *ih* ձևույթով *pātar* «պահապան», *pātarīh* «պաշտպանություն», *pitār* «հայր» – *pitarih* «հայրություն» և այլն (տե՛ս Գ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. Պահլավերեն-հայերեն բառարան. Երևան, 1994):

44 Իրանական մեկ այլ ածանցի՝ *isn* – դեպքում էլ ունենք – ի-ի սղման դեպք կարչ-նեղ «գործող, ուժեղ» բառում: Կարչնեղ-ի ստուգաբանությունը տե՛ս Լ. Հ ո վ հ ա ն - ն ի ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 243–244:

45 Տե՛ս «Հանգես ամսորյա», 1912, էջ 290:

46 Արմ. սկսանիլ բառահոգվածը:

քննելով ժամանակ ցույց տվող հնդեվրոպական անվանումները, նկատում է, որ «բնիկ հնդեվրոպական ծագում չունեն սկսանիմ, աւարտեմ, պատրաստ ե նման տիպի բառերը. հնում կարող էին սկսանիմ-ի փոխարեն գործածական լինել հաւիմ, աւարտեմի փոխարեն բոլորեմ, լնում բայերը»⁴⁷:

Ելնելով սկսանիմ-ի զուտ կառուցվածքային վերլուծությունից կարող ենք առանձնացնել սկս-ան-իլ ձևությունները, որոնցից -ան-ը բայածանց է, իլ-ը վերջավորություն, ուրեմն՝ ինքնըստինքյան սկս-ն պետք է համարել արմատ: Արմատի սկս հնչյունախումբն էլ դժվարություն է հարուցում հ. - ե. նախածեի, հ. - ե. որևէ լեզվի, ինչպես նաև ոչ հ. - ե. որևէ լեզվի գուգահեռի հետ համադրմանը⁴⁸: Թվում է սկսանիմ-ի ստուգաբանությունը կարող է օգնել որոշ բարբառներում (Ղարաբազ, Թիֆլիս) դործառող կրկնի հոմանիշը: Բարբառային կրկնի «սկսել» իմաստը դարբարի բառաբանները չեն վկայում: ՆՀԲ-ն կցեմ-ը մեկնում է կից առնել զգատուցեալս, զուգել, յարել, մերձեցուցանել, հասուցանել, մատուցանել, միաւորել, խառնել... Ն. Բյուզանդացին այս շարքին ավելացնում է և «բարձրանալ» նշանակությունը՝ բերելով համապատասխան օրինակներ⁴⁹: Իմաստային այս բազմազանություն մեջ բացառելի չէ և «ձեռնարկել, սկսել» նրբիմաստը:

Անդրադառնանք կցել-սկս/ան/ել ձևային անցման հնարավորությանը: Ենթադրում ենք *կցել-*սկցել-սկսել անցումը⁵⁰ (զ-ս-ի համար հմտ. գլխիկ-սքողել, զթափ-սթափ... և այլն): Ինչ վերաբերում է կից(կցել)-ին, ապա թեև Արմ.-ում ստուգաբանված չէ, սակայն նորագույն ուսումնասիրություններում այն հնդեվրոպական է համարվում⁵¹: Սկսանիլ-ի հ. - ե. բնույթը կարելի է փաստարկել նաև Վ. Առաքելյանի այն նրբին դիտարկումով, թե «գրաբարում չկա ան, են, ն, նչ, անչ, չ ածանցներով կազմված որևէ բայ, որ օտար փոխառություն լինի, մանավանդ, որ այդ ածանցները եղել են միջնաածանցներ, այսինքն՝ գտնվել են արմատի մեջ»⁵²:

47 Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 269:

48 Գ. Ջահուկյանը նշում է սկիս- խեթ. kis «դառնալ, պատահել» գուգահեռը (նույն տեղում, էջ 318):

49 Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. սրբագրուած և ճոխացուած նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով. հրատարակութեան սլատրաստեց Մարտիրոս Մինասեանը. հ. 3, Ժնեւ, 1990, էջ 1139:

50 Սկսանիլ-ը կցել-ից առաջնայու գեպքում կարելի է ենթադրել նախնական սկսել ձևը, կամ էլ նախնական կցանիլ-ը: Գրավոր ավանգված են մի շարք ածանցավոր և անածանց գույգեր. տարածանեմ-տարածեմ, լիզանեմ-լիզեմ, ողողանեմ-ողողեմ...: Ավելին, երբեմն -ան-ը ի հայտ է գալիս այնպիսի բայերի մեջ, որի հ. - ե. հիմքը առանց ուղղանի է. *mer-մեռանիմ, *phol-փլանիմ և այլն:

51 Գ. Ջահուկյանը կից-ը բխցնում է հ. - ե. *^her- -sk նախածեից՝ *^her- «սեղմել, ներառել, խցկել» արմատից: Է. Աղայանը կապում է *ger- արմատի հետ sko-մասնիկով (Տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 249: Է. Աղայան. նշվ. աշխ., էջ 85):

52 Վ. Առաքելյան. Հայերենի ներքին տվյալներով էլ կարելի է վերականգնել բնիկ հնդեվրոպական բառերը («Էջմիածին», 1998, Ժ-ԺԱ, էջ 90):

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

ЛАВРЕНТИЙ ОГАНИСЯН

Резюме

В статье прослеживается этимология нескольких слов. Աղի(ք) "кишка" выводится из и.-е. *sal – "грязь", ср. также образованное от того же корня арм. աղա, աղծ "грязь". Первоначальное значение слова աղի(ք) – "посуда (сосуд) для грязи; содержащий грязь". Корнем слова առաքինի "отважный, смелый, благочестивый" является աք "нога", от которого образовано и առաքել "послать". Աւազակ – иранское заимствование, от корня (a)vaz "звук, возглас", со значением "кричащий, имеющий грубый голос". Բոսոր "красноватый" – смысловое развитие библейского топонима Босор на основе признака "желтовато-красный цвет пустыни". Слово երկաթ "железо" рассматривается как фонетический вариант исконно армянского слова и.-е. происхождения աբաթ с чередованием $\delta > Կ$, ср. կամակոր-ծամածոռ, զրկել-զերծել..., а начальные звуки этих слов Կ, ա могут быть рассмотрены как свойственные армянскому языку протетические гласные, ср. աբաթ "быстро, быстрый", – երաթ "быстрый". Лишь один раз зафиксированное слово ստուգարհել "стать сильным" является иранским заимствованием: ир. префикс Pati – арм. ստու, корень-gar/kar-կար "сила" и суффикс абстрактных существительных –ih. *ստուգարհել-ստուգարհել: Սկս(ան)ել "начинать" связывается с диалектным կըցել "начинать" с переходом կկց(ան)ել-սկցանել-սկսանել:

ETYMOLOGICAL COMMENTS

LAURENTI HOVHANNISYAN

Summary

The etymology of some Arm. words is offered in the article. *Ati(k')* – "gut, intestines" <i.e. sal "dirt". Compare also Arm. *Ati, atc* "dirt" from the same root. The ancient meaning of word *atik* has been "the pot of dirt containing dirt". The root of the word *arak'ini* "brave, valiant, pious" is considered the word *ak'* "foot". *Arak'el* "to send" also consists of the root *ak'*. *Avazak* "robber, brigand" is an Iranian loan-word from the Iranian *avaz* "sound, voice". Thus *avazak* formerly had the meaning of roaring, rude voiced man. *Bosor* "crimson" is the semantic development *Holly Bible's* toponym *Bosor* "yellowred colour of the desert". *Erkat'* is considered as a phonetical variant of the native arm word *arcat'*. For the ck change compare Arm. *zrkclzercel*, *kamakorcamacur*. Initial sounds *a, e* of these words are the prothetical vowels: compare *aragerag* etc. *Patgarhel* "to use force" has a unique evidence. It is an Iranian loan-word: *pati*→Arm. *pat* is a suffix, *gar/kar* "force", and *ih* is a suffix, which forms abstract nouns. Thus **patgarihel*→*patgarhel*. *Sksanil* "to begin" is connected to dialectal *kācel* "to begin" with *zkcanli*→*skcanel*→*sksanel* transmission.